ՏԵՍՏԻՉԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

# ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԳԼՈՒԽԳՈՐԾՈՑ

## կամ՝ ակադեմիայի նախագահի մութ գործարքները


Լուսանկարը՝ «ՀԺ»-ի

**Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ֆադեյ Սարգսյանն իրականացրել է իր հերթական մութ գործարքը:**

Ֆադեյ Տաճատիչը, որ արդեն երկու տարի է ակադեմիայի «Գիտություն» հրատարակչության տպարանի համար հարմար «տեր» գտնելու նպատակով շարունակ ինչ-որ ծրագրեր է մտմտում, իրականացրել է իր մտադրությունը: Հրատարակչության աշխատակիցներից գաղտնի, ակադեմիայի նախագահը «Գիտության» տպարանը հանձնել է «Էդիտ Փրինթ» կազմակերպությանը: Թե ինչ պայմաններով է այս կազմակերպությունը տիրացել տպարանին, հայտնի չէ: Ամբողջ խնդիրն այն է, որ, ըստ գիտության մասին օրենքի 8-րդ հոդվածի 9-րդ կետի, ԳԱԱ նախագահը իրավունք չունի վաճառել ակադեմիային պատկանող գույքը: Թեեւ, չի բացառվում, որ տպարանը «Էդիտ Փրինթին» հանձնված լինի վարձակալության սկզբունքով: Նման բան օրենքը, իհարկե, թույլ տալիս է, բայց Ֆադեյ Սարգսյանի կողմնակիցները համառորեն գաղտնի են պահում գործարքը: Դրանից մնում է միայն ենթադրել, որ գործարքն անօրինական է: Բանն այն է, որ Ֆադեյ Սարգսյանը դեռ 2 տարի առաջ ցանկանում էր հիշյալ տպարանը հանձնել «Փրինթինֆո» կազմակերպությանը: Ըստ նրա սցենարի, «Փրինթինֆոն» պետք է պատվերներ ստանար ու շահույթը կիսեր ակադեմիայի հետ: Սա Տաճատիչն այն ժամանակ չէր էլ թաքցնում: Բայց քանի որ այն ժամանակ հրատարակչության աշխատակիցները մեծ աղմուկ բարձրացրին, գործարքը տապալվեց: Չի բացառվում, որ նույն այդ սցենարը գործում է այժմ, պարզապես գումարները ակադեմիայի հաշվապահությունում չեն մուտքագրվում:

Ի դեպ, «Էդիտ Փրինթը» պատկանում է ակադեմիայի փոխնախագահ Յուրի Շուքուրյանի քրոջ որդուն Մկրտիչ Կարապետյանին: Հետաքրքիր է, որ երեկ ակադեմիայի գործերի կառավարիչ պարոն Գեւորգյանը փորձում էր մեզ հավատացնել, թե տպարանը ոչ ոքի էլ չի հանձնվել: Բայց «Էդիտ Փրինթի» փոխտնօրենը, որ մեր հարցից անակնկալի եկավ, ըստ էության հաստատեց, որ ակադեմիայի տպարանը «Էդիտ Փրինթինն» է: Նա, սակայն, հայտարարեց, թե իրենց կարգավիճակը տպարանում առայժմ ճշտված չէ: ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությանը ակադեմիայի ղեկավարությունը միայն 2002-ի դեկտեմբերին է հայտնել, որ տպարանն այլեւս իրենց չի պատկանում: Նրանք արդեն սկսել են իրենց իրերի տեղահանումը տպարանից: Հրատարակչության տնօրեն Վաչե Հովակիմյանը, սակայն, չի ցանկանում այս թեմայով որեւէ բան խոսել: Նա միայն հաստատեց, որ տպարանն այլեւս հրատարակչությանը չի պատկանում եւ վերջ:

Ինչեւէ, տպարանի նոր տերերն արդեն հասցրել են տպել իրենց առաջին գլուխգործոցը: Այն կոչվում է «Կյանքի դրվագներ»: Ֆադեյ Տաճատիչի հովանավորությամբ եւ ՀՀ ԳԱԱ նախագահության որոշումով տպագրված՝ աշխարհահռչակ գիտնական Վիկտոր Համբարձումյանի հեղինակած այդ գիրքն աննախադեպ է ակադեմիայի պատմության մեջ: Ու, թերեւս, աշխարհահռչակ աստրոֆիզիկոսին հնարավոր չէր լինի ավելի ուժեղ ապտակ հասցնել, քան հասցվել է այս գրքի տպագրությամբ: «Կյանքի դրվագները» հենց առաջին տողից սկսվում եւ վերջանում է սարսափելի ուղղագրակետադրական սխալներով ու մտքի խեղաթյուրումներով: «Իսկ 1995 թվականին, չլինելով Ռուսաստանի քաղաքացի, նա Ռուսաստանի Դաշնակցության պետական մրցանակի արժանացավ 30-ական թվականներին աստղային դինամիկայի ասպարեզում ստացած արդյունքների համար»,- այս նախադասությունը կարելի է կարդալ ակադեմիական այդ հրատարակության 9-րդ էջում՝ գրքի պատասխանատու խմբագիր Հայկ Հարությունյանի խմբագրականում: «Վիկտոր Համբարձումյանի երեւույթն անհնար է անջատել նրա հոր եզակի երեւույթից»,- գրքի 13-րդ էջում գրում է գրքի կազմող Կարինե Շահբազյանը: Թվում է, թե հայտնի գիտնականի ինքնակենսագրականը հրատարակելուց առաջ ակադեմիան որոշել է, որ այսուհետ աշխարհ բառը պետք է գրվի առանց «հ» տառի, պաշտպանել բառը՝ առանց «տ»-ի, «են» օժանդակ բայը հարկավոր է գրել 7-րդ «է»-ով, կամ ասենք, «ժողովուրդ» բառը սեռական հոլովի ժամանակ պետք է դառնա ոչ թե «ժողովրդի», այլ «ժողովուրդի», «բժիշկը»՝ «բժիշկի» եւ այսպես շարունակ: Որոշ դեպքերում սխալները հասնում են զավեշտի: «Մի քանի տարի անց միայն հայտնի դարձան նրա մահվան պարագաները», «Իմ ջանքերը նրա ուշադրությունը շուռ տալ դեպի «նուրբ քիմիա», անցան ապարդյուն», «Դրա փոխարեն բոլորը նրա ընկերներն ու բարեկամներն էին՝ կենդանի լսարանի առումով: Բոլոր երեխաները առանձ բացառության՝ թե՛ գիմնազիայում թե՛ մեր մոտ բակում, բոլորը նրա ունկնդիրներն էին»,- Վիկտոր Համբարձումյանի գրած այս նախադասությունները գրքի հրատարակիչներն «ալարել» են անգամ խմբագրել: Պատկերացրեք, որ մեզ անգամ չհաջողվեց պարզել՝ այս գիրքը թարգմանություն է ռուսերենի՞ց, թե՞ ոչ: ԳԱԱ հրատարակչության աշխատակիցներից ոչ ոք չկարողացավ պատասխանել այս հարցին: Մի խոսքով, գիտությունների ազգային ակադեմիայի հովանավորությամբ հրատարակվել է մի գիրք, որի յուրաքանչյուր էջ ողողված է տասնյակ սխալներով: Նման արհամարհական վերաբերմունքը մեր մեծերի նկատմամբ աններելի է: Աշխարհահռչակ գիտնականի ինքնակենսագրականը, սակայն, նման տեսքով լույս աշխարհ չէր գա, եթե չլինեին Ֆադեյ Սարգսյանի գործարքները: Բանն այն է, որ տպարանը, որտեղ տպագրվել է Տաճատիչի նախորդի ինքնակենսագրականը, նախկինում պատկանում էր ակադեմիայի «Գիտություն» հրատարակչությանը: Ակադեմիական գրքերը հրատարակելուց առաջ դրանք սրբագրվում, խմբագրվում ու վերջնական տեսքի էին բերվում հենց այս հրատարակչությունում: «Կյանքի դրվագները», սակայն, հրատարակչություն չի մտել եւ անմիջապես վստահվել է «Էդիտ Փրինթին»: Ի դեպ, Վիկտոր Համբարձումյանի գրքում «Էդիտ Փրինթի» անունը չի նշվել: Այնտեղ միայն գրված է, որ գիրքը «Տպագրված է Ինֆորմատիկայի եւ ավտոմատացման պրոբլեմների ինստուտում», որի տնօրենը նույն Յուրի Շուքուրյանն է՝ ԳԱԱ փոխնախագահը: Այս ինստիտուտն, իհարկե, առանձին տպարան ունի, սակայն այնտեղ մեզ հայտնեցին, որ «Կյանքի դրվագները» տպագրվել է ակադեմիայի (ասել է թե՝ արդեն «Էդիտ Փրինթ») տպարանում:

ԼՈՒՍԻՆԵ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ԿԱԴՐԱՅԻՆ ՋԱՐԴ